ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
21 հունիսի 2022 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/5
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 54 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Գևորգ Սիմոնյանը, Սուրեն Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Գարիկ Բարսեղյանը, Սուսաննա Գրիգորյանը, Մերի Մարգարյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Արթուր Կարապետյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը, ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր, քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը և Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանձնաժողովի անդամ, հասարակական, մշակութային գործիչ Վահան Վարդապետյանը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 1-ին նիստը կգումարվի 2022 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 11.00-ին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Եղիազարյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի իր լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 6-ի հ.62 արձանագրության՝ Երևանի ավագանու ԻՄ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Ակսել Թևոսյանին: Ակսել Թևոսյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի իր լիազորությունները դադարեցնելու մասին:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ 2022 թվականի հունիսի 21-ի նիստի օրակարգի նախագծից հանում է օրակարգի նախագծի 13-րդ հարցը՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող Մամիկոնյանց փող. 62 շենքի հ.141 բնակարանը անհատույց օտարելու մասին» և 18-րդ հարցը՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» (Արտ. Միկոյան փողոցի հ.26 հասցե):

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի հունիսի 21-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
4. Հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին:
5. Հուշատախտակների տեղադրման մասին:
6. «Երևանի հ.22 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:
7. Երևան քաղաքի Լիսինյան փողոցը Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ անվանափոխելու մասին:
8. Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:
9. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
10. Երևանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, անվանափոխելու, կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
11. «Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին:
12. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

13. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
14. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
15. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:
16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
18. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
19. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
20. Երևան քաղաքի թվով 12 վարչական շրջանների վարչական շենքերում «Հայփոստ» ՓԲԸ-ին վարձակալությամբ տարածքներ տրամադրելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի խորհրդական Մերի Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Միքայել Մանրիկյան- Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
3. Անահիտ Ասատրյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի խորհրդական Մ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Աշոտ Սարգսյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Անահիտ Ասատրյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 2 հավելվածում.

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն				
1	Վարչության պետ	1	697,000		697,000
2	Վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	Գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	323,000		323,000
4	Գլխավոր մասնագետ	5	323,000		1,615,000
5	Առաջատար մասնագետ	4	289,000		1,156,000
	Ընդամենը՝	**12**			**4,352,000**

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «698.5» և «232,577,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «695.5» և «231,863,800» թվերով,

3) «Ամբողջը» տողում «1988.5» և «605,670,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1985.5» և «604,956,000» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Նուարդ Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման.

1. N 1 հավելվածը լրացնել 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայություն»,

2) ««I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել 1.1-ին գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Քարտուղարություն»,

3) Ուժը կորցրած ճանաչել «Ι. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» գլխի 23-րդ կետը և «3.Բաժիններ» գլխի 9-րդ կետը:

2. N 2 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) ««Ι. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել «Քարտուղարություն» տողով հետևյալ բովանդակությամբ.

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
Քարտուղարություն					
1	քարտուղարության պետ	1	697,000		697,000
Ընդհանուր բաժին					
2	բաժնի պետ	1	408,000		408,000
3	գլխավոր մասնագետ	5	289,000		1,445,000
4	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
Քաղաքացիների սպասարկման բաժին					
5	բաժնի պետ	1	408,000		408,000
6	բաժնի պետի տեղակալ	1	326,400		326,400
7	գլխավոր մասնագետ	9	289,000		2,601,000
8	առաջատար մասնագետ	15	282,200		4,233,000
9	առաջին կարգի մասնագետ	4	272,000		1,088,000
10	քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի առաջին կարգի մասնագետ	17	132,300		2,249,100
Արխիվային գործի վարման բաժին					
11	բաժնի պետ	1	408,000		408,000
12	գլխավոր մասնագետ-գլխավոր արխիվագետ	1	289,000	34680	323,680
13	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**59**			**15,003,180**

»

2) «Ι. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կազմակերպական վարչություն» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
Կազմակերպական վարչություն					
1	Վարչության պետ	1	697,000		697,000
2	Վարչության պետի	1	561,000		561,000

	տեղակալ				
3	Գլխավոր մասնագետ	2	323,000		646,000
4	Առաջատար մասնագետ	1	289,000		289,000
5	Առաջին կարգի մասնագետ	1	282,200		282,200
	Երկրորդ կարգի մասնագետ	1	272,000		272,000
6	Խմբակցության փորձագետ	5	306,000		1,530,000
7	Գործավար	10	248,200		2,480,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	22			6,759,200

»,

3) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժինը լրացնել «1.1. Մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայություն» տողով հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/հ	**Հաստիքների անվանումը**	**Հաստիքների քանակը**	**Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը**	**Հավելում**	**Ընդամենը ամսական աշխատավարձը**
1.1	Մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայություն				
1	ծառայության պետ	1	697,000		697,000
2	գլխավոր մասնագետ	2	323,000		646,000
3	առաջատար մասնագետ	2	289,000		578,000
4	Պահեստի պատասխանատու	1	289,000		289,000
5	վարորդ	1	289,000		289,000
6	վարորդ	8	272,000		2,176,000
7	վարորդ	34	255,000		8,670,000
8	տեխնիկական սպասարկող	1	255,000		255,000
9	բանվոր	2	255,000		510,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	52			14,110,000

»,

4) Ուժը կորցրած ճանաչել որոշման N 2 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արձանագրային և արխիվային գործերի բաժին» տողը:

5) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «695.5», «127,500» և «231,863,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «638.5», «75,480» և «216,841,580» թվերով:

6) «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1290» և

«373,092,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «1342» և «387,202,200» թվերով:

7) «Ամբողջը» տողում «1985.5», «127,500» և «604,956,000» թվերը փոխարինել «1980.5», «75,480» և «604,043,780» թվերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

4. ԼՍԵՑԻՆ - Հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

«Հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթներ ունեցան ՀՀ ժողովրդական նկարիչ Գետիկ Բաղդասարյանը և Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանձնաժողովի անդամ, հասարակական, մշակութային գործիչ Վահան Վարդապետյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Անի Խաչատրյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Սարգսյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը, հասարակական, մշակութային գործիչ Վ. Վարդապետյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի կիսանդրու տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ

3. Նուարդ Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Միքայել Մանրիկյան- Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

6. Թեհմինա Վարդանյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

7. Լևոն Զաքարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8. Անի Խաչատրյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի հարակից տարածքում հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի կիսանդրու տեղադրմանը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

5. ԼՍԵՑԻՆ - Հուշատախտակների տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հուշատախտակների տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն.

1) ճարտարագետ-երկրաբան, երկրաբանահանքագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Կոնստանտին Պաֆենհոլցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծի պողոտա h.32 հասցեում փակցնելու համար,

2) Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, պատմաբան, հրապարակախոս, թարգմանիչ Գարեգին Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց h.20 հասցեում փակցնելու համար,

3) հայ մեքենագետ, ՀՍՍՀ-ում գյուղատնտեսության մեքենայացման հիմնադիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտությունների

վաստակավոր գործիչ Սմբատ Սահակյանի և նրա որդու՝ հայ գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էդուարդ Սահակյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց հ.33 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

6. ԼՍԵՑԻՆ - «Երևանի հ.22 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ ««Երևանի հ.22 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի հ.22 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Գևորգ Արշավիրի Արշակյանի անվամբ՝ «Երևանի Գևորգ Արշակյանի անվան հ.22 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

7. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի Լիսինյան փողոցը Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ անվանափոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի Լիսինյան փողոցը Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ անվանափոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Լիսինյան փողոցն անվանափոխել ականավոր գիտնական, ֆիզիկոս, գեղանկարիչ Գրիգոր Գուրզադյանի և ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Սարգիս Գուրզադյանի անվամբ՝ «Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Իսպիրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի.

1) Վերին Անտառային փողոցի հ.120 հասցեից մինչև Լեոնիդ Ազգալդյան փողոց ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, թավջութակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արտեմի Այվազյանի անվամբ՝ «Արտեմի Այվազյան փողոց»,

2) Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Վերին Անտառային փողոցի հ.150/17 հասցե ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանի անվամբ՝ «Էդվարդ Միրզոյան փողոց»,

3) Վերին Անտառային փողոցի հ.150/17 հասցեից մինչև հ.174/10 հասցե ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, դիրիժոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի անվամբ՝ «Կոնստանտին Օրբելյան փողոց»,

4) Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Վերին Անտառային փողոցի հ.128/2 հասցե ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Հարությունյանի անվամբ՝ «Ալեքսանդր Հարությունյան փողոց»,

5) Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Գոհար Գասպարյան փողոց ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդգար Հովհաննիսյանի անվամբ՝ «Էդգար Հովհաննիսյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

9. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Արման Անտոնյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Լենինգրադյան փողոցի հ.23/13 շենքի հ.4՝ 92.3ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28032014-01-0218 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մալխաս Ամոյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

10. ԼՍԵՑԻՆ - Երևանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, անվանափոխելու, կանոնադրություն-ները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ –Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Անի Խաչատրյան - Երևան քաղաքի ավագնու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3. Մարկոս Հարությունյան- Երևան քաղաքի ավագնու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

4. Թեհմինա Վարդանյան- Երևան քաղաքի ավագնու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

5. Արմեն Ներսիսյան - Երևան քաղաքի ավագնու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

6. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագնու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պաևզաբանումներ ներկայացրեց Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, անվանափոխելու, կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
4. Անի Խաչատրյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 15.10-ին:

«Երևանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, անվանափոխելու, կանոնադրություն-ները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 22, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 12

Որոշումը չընդունվեց:

11.ԼՍԵՑԻՆ - Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը:

«Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արմեն Ներսիսյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
2. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Գառնիկ Վարդանյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի խորհրդական Կ.Արեյանը և աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Գ.Նազարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Լևոն Զաքարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Արմեն Ներսիսյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
3. Լուսինե Գևորգյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Դիանա Քերոբյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. 2023 թվականի բյուջետային գործընթացով սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը և դրա գծով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների գումարը ստանալու հայտը ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

12. ԼՍԵՑԻՆ - «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Արման Բաբաջանյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ ««ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 30, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

13. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2009

թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 2.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2.1. Հաստատել Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն ստանալու դիմումի, թույլտվության, արտաքին գովազդի միջոց տեղադրելու թույլտվության, արտաքին գովազդի միջոցի տեղադրման թույլտվության ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի:».

2) Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) Որոշման N 1 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) ամբողջ տեքստում «Գովազդ» բառը փոխարինել «գովազդ» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

4) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 10. 1-ին կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«10. 1. Երևան քաղաքում գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տալիս են Երևանի վարչական շրջանների ղեկավարները:».

5) Հավելվածի 2-րդ գլխի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Գովազդ տեղադրելու համար գովազդատուն, գովազդակիրը սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ձևի (Ձև 1) դիմում է ներկայացնում դրա տեղաբաշխման վայրի համապատասխան վարչական շրջանի ղեկավարին, իսկ տրանսպորտային միջոցի վրա գովազդ տեղադրելու դեպքում՝ Երևան քաղաքի որևէ վարչական շրջանի ղեկավարին:».

6) Հավելվածի 2-րդ գլխի 11. 1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. 1. Դիմումը պետք է պարունակի.

1) վարչական շրջանի անվանումը,

2) վարչական շրջանի ղեկավարի անունը և ազգանունը,

3) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման համարը),

4) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը),

5) դիմողի հետ կապ հաստատելու միջոց հանդիսացող բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (դրա առկայության դեպքում),

6) գովազդի տեղաբաշխման ժամկետը, որով դիմողը ցանկանում է տեղաբաշխել գովազդը,

7) Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի (եթե Գովազդը նախատեսվում է տեղադրել համայնքային գույքի վրա, դրա օգտագործմամբ) օգտագործման համաձայնություն տալու մասին հայցում,

8) դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

9) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը,

10) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը, տվյալներ այն գովազդային միջոցի մասին, որի վրա նախատեսվում է տեղադրել գովազդը, մասնավորապես՝ գովազդային միջոցի հասցեն, դրա տեսակը:».

7) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 11. 2. -րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«11. 2. Դիմումին կցվում են.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) գովազդի գունավոր ուրվանկարը (էսքիզը)՝ գովազդի չափերի նշումով, իսկ էլեկտրոնային էկրանի վրա գովազդ տեղադրելու դեպքում՝ էլեկտրոնային գովազդային նյութերը կրիչով,

3) եթե դիմումը ներկայացվում է դիմողի լիազորված անձի կողմից, ապա օրենքով սահմանված կարգով լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

4) հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր,

5) տեղական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:».

8) Հավելվածի 2-րդ գլխի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Գովազդի միջոց տեղադրելու համար, անձը սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ձևի (Ձև 3) դիմում է ներկայացնում դրա տեղադրման վայրի համապատասխան վարչական շրջանի ղեկավարին, իսկ տրանսպորտային միջոցի վրա գովազդի միջոց տեղադրելու դեպքում՝ Երևան քաղաքի որևէ վարչական շրջանի ղեկավարին:».

9) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 12. 1. -րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«12. 1. Դիմումը պետք է պարունակի.

1) վարչական շրջանի անվանումը,

2) վարչական շրջանի ղեկավարի անունը և ազգանունը,

3) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման համարը),

4) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը),

5) դիմողի հետ կապ հաստատելու միջոց հանդիսացող բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (դրա առկայության դեպքում),

6) գովազդային միջոցի տեղադրման վայրը և ժամկետը, որով դիմողը ցանկանում է տեղադրել գովազդի միջոցը,

7) Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի (եթե գովազդի միջոցը նախատեսվում է տեղադրել համայնքային գույքի վրա, դրա օգտագործմամբ) օգտագործման համաձայնություն տալու մասին հայցում,

8) դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

9) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը,

10) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:».

10) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 12. 2. -րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«12. 2. Դիմումին կցվում են.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) գովազդի միջոցի նախագիծը, այն կոնստրուկցիա, կառույց կամ տեխնիկական այլ միջոց լինելու դեպքում՝ համապատասխան փորձաքննության եզրակացությունը,

3) եթե դիմումը ներկայացվում է դիմողի լիազորված անձի կողմից, ապա օրենքով սահմանված կարգով լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

4) հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր,

5) տեղական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:».

11) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 12. 3. կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«12.3. Մեկից ավելի վարչական շրջաններում գովազդային գործունեություն իրականացնող գովազդակիրներն ուրվանկարների և համապատասխան փորձաքննության մոնտաժային նախագծերի համաձայնեցման համար մինչև սույն կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով համապատասխան վարչական շրջան դիմում ներկայացնելը կարող են դիմել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն՝ ներկայացնելով գովազդային ուրվանկարների փաթեթները կամ գովազդային միջոցների նախագծերը: Ներկայացվող դիմումում պետք է նշվեն գովազդի տեղադիրը (հասցե) ըստ վարչական շրջանների, արտաքին չափերը, մակերեսը և տեղադրման ժամանակացույցը:».

12) Հավելվածի 2-րդ գլխի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) սույն որոշման 11-րդ կամ 12-րդ կետով նախատեսված դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում պարզում է դրանց համապատասխանությունը սույն կանոնների պահանջներին: Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա Աշխատակազմը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա Աշխատակազմը դիմողին առաջարկում է երեք աշխատանքային օրվա ընթացքում համալրել այն:».

13) Հավելվածի 2-րդ գլխի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Եթե դիմումը և կից փաստաթղթերը համապատասխանում են Կանոնների պահանջներին, կամ դիմողի կողմից վերացվել են ձևական խախտումները, ապա Աշխատակազմը դիմումի Կանոնների պահանջներին համապատասխանելու մեջ հավաստվելուց կամ ձևական խախտումները դիմողի կողմից վերացվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն՝ ուրվանկարների և համապատասխան փորձաքննություն անցած մոնտաժային նախագծերի համաձայնեցման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության համապատասխան հողհատկացման, Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի օգտագործման (համաձայնության) թույլտվության հարցերի քննարկման և լուծման համար:»:

14) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 17. 1-ին կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«17. 1. Վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված դիմումի և դրան կից փաստաթղթերի սույն կանոններին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ կիրառելի պահանջներին համապատասխանելու դեպքում, Երևան քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից տրվում է համաձայնություն ներկայացված դիմումի հիման վրա համապատասխան թույլտվություն տրամադրելու վերաբերյալ: Թույլտվությունը տրվում է դիմումում նշված ժամկետով:».

15) Հավելվածի 2-րդ գլխի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից համաձայնություն տրված ուրվանկարները, սահմանված չափի տեղական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, փորձաքննություն անցած մոնտաժային նախագծերը, ինչպես նաև սույն կանոններով նախատեսված այլ փաստաթղթերը (հողհատկացման որոշում և այլն) ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում վարչական շրջանի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղաբաշխման կամ գովազդի միջոցի տեղադրման թույլտվություն՝ համաձայն ձևի: Վարչական շրջանի ղեկավարի կողմից նշված թույլտվությունները կարող են տրվել դիմողի կողմից դիմումում նշված ժամկետից նվազ ժամկետով, ներկայացնելով այդպիսի որոշման պատճառաբանությունները: Եթե համաձայնության տրամադրումը մերժվել է, ապա գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն տալը մերժում է նույն ժամկետում:».

16) Հավելվածի 2-րդ գլխի 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Արտաքին գովազդի տեղաբաշխման կամ գովազդի միջոցի տեղադրման թույլտվություն տրամադրելուց հետո Աշխատակազմը պետք է պարզի գովազդի տեղաբաշխման և գովազդի միջոցի տեղադրման համապատասխանությունը դիմողի կողմից ներկայացված դիմումին և դրան կից նյութերին, ինչպես նաև տրված թույլտվությանը: Անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Աշխատակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչությանը:».

17) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 19. 1-ին կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«19. 1. Համայնքի կողմից սույն որոշման 19-րդ կետի 1-ին պարբերության երկրորդ նախադասության և նույն կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված գործողությունները կատարման են ենթակա նաև այն դեպքում, երբ անձի կողմից տեղաբաշխվել է գովազդ կամ տեղադրվել է գովազդի միջոց համապատասխան թույլտվություն բացակայության պայմաններում:».

18) Հավելվածի 2-րդ գլխի 21.1.-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21.1. Գովազդի տեղաբաշխման, գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ դիմումը Կանոնների 16-րդ կետով սահմանված ժամկետում ենթակա է մերժման հետևյալ դեպքերում՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հավելվածի 3-րդ գլխով նախատեսված չափորոշիչների և Կանոնների պահանջներին,

2) խախտվում են սույն կանոնների և այլ իրավական ակտերի պահանջները:».

19) Հավելվածի 2-րդ գլխի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25. Գովազդի տեղաբաշխման, գովազդի միջոցի տեղադրման թույլտվություն ստացած անձը կարող է թույլտվությունը փոխանցել այլ անձի՝ վարչական շրջանի ղեկավարի և Երևանի քաղաքապետարանի արտաքին ձևավորման և գովազդի վարչության համաձայնությամբ: Փոխանցումը կարող է տեղի ունենալ համապատասխան թույլտվությունից բխող իրավունքը ձեռք բերելուց հետո 4 ամսից ոչ շուտ: Համաձայնությունը տրվում է այդ մասին համապատասխան դիմում ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:».

20) Հավելվածի 2-րդ գլխի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Գովազդի տեղաբաշխման, գովազդի միջոցի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու, այն վաղաժամ դադարելու դեպքում գովազդատուն, գովազդակիրը, գովազդային միջոցի տեղադրման թույլտվություն ստացած անձը պարտավոր են թույլտվության ժամկետը լրանալուց կամ վաղաժամկետ դադարեցվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում իրենց միջոցներով ապամոնտաժել գովազդը, գովազդի միջոցը, իսկ զբաղեցրած տարածքը, շենքերը, շինությունները կամ այլ գույքը, որի վրա տեղակայված, տեղադրված է եղել գովազդը, գովազդի միջոցը, բերել նախկին վիճակին:».

21) Հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 26. 1. -րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«26.1.Անձն ունի իր գովազդի միջոցի տեղադրման թույլտվության ժամկետի երկարաձգման նախապատվության իրավունք: Այդ նպատակով անձը թույլտվության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ դիմում է համապատասխան վարչական շրջանի ղեկավարին:».

22) Հավելվածի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«III. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

14. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N 497-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

15. ԼՍԵՑԻՆ - Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրատվություն ընդունել Ընկերություններին սեփականության իրավունքով պատկանող ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 2/8 և ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս թիվ 19/3 հասցեներում գտնվող շենք-շինությունները, շարժական և այլ անշարժ գույքերը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

16. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Տիգրան Գալստյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ.Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի Շրջանցիկ թունել փողոցի հ.52/1 հասցեում գտնվող «Ավելիաց» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.2157հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողերի կատեգորիայից փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

17. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Սևանի փողոցի հ.21/8 հասցեում գտնվող Վահագն Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02022018-01-0187 վկայական, գաղտնաբառ՝ I1QQDBAWTFBA) հողամասի նպատակային նշանակությունը «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

18. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Իսակովի պողոտայի հարևանությամբ գտնվող պոմպակայանի զբաղեցրած 30.83քմ և Թևոսյան փողոցում գտնվող խորքային հորի զբաղեցրած 3.67քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները

համապատասխանաբար «բնակավայրերի» և «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների» հողերի կատեգորիաներից փոխադրել «էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի, Ավան վարչական շրջանի Մ. Բաբաջանյան փողոցի հ.117/4, հ.117/6 և Մ. Խուդյակովի փողոցի հ.218/14 հասցեներում գտնվող «Ջիբրեյն» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար 0.0281հա, 0.07581հա և 0.53804հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակություններն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

20. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի թվով 12 վարչական շրջանների վարչական շենքերում «Հայփոստ» ՓԲԸ-ին վարձակալությամբ տարածքներ տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի թվով 12 վարչական շրջանների վարչական շենքերում «Հայփոստ» ՓԲԸ-ին վարձակալությամբ տարածքներ տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ն. Զարյան փողոցի հ.27, Ա. Սարգսյան փողոցի հ.5, Խուդյակովի փողոցի հ.222, Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.23/1, Սասունցի Դավթի փողոցի հ.87, 87ա, Տերյան փողոցի հ.44, Սեբաստիա փողոցի հ.32, Գայի պողոտայի հ.19, Ա. Արմենակյան փողոցի հ.141, Նուբարաշեն 9-րդ փողոցի հ.4, Գ. Նժդեհի փողոցի հ.26, Դ. Անհաղթի փողոցի հ.11 հասցեներում գտնվող վարչական շենքերում «Հայփոստ» ՓԲԸ-ին վարձակալության իրավունքով, երեք տարի ժամկետով, տրամադրել մինչև 20.0քմ մակերեսով տարածքներ՝ բացառապես ընկերության կանոնադրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով:

2. Երևանի քաղաքապետին՝ քննարկվող տարածքների համար «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ կնքել գույքի վարձակալության պայմանագրեր:

3. Վարձակալությամբ տրամադրվող տարածքների վարձավճարների հաշվարկը իրականացնել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված գույքի վարձավճարի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունների, իսկ տարածքների հստակ մակերեսները ամրագրել լիցենզավորված չափագրողի կողմից տրված չափագրման տվյալների հիման վրա:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան